ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ — «Երկերի ժողովածու», հատոր չորրորդ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն. 1966 թ., տպաքանակը՝ 12000, 618 էջ, գինը 2 ռ. 16 կ.։

Պատկանյանի երկերի գիտական հրատարակության այս հատորն ընդգրկում է հեղինակի Նոր Նախիջևանի բարբառով գրված գեղարվեստական արձակը (պատմվածքներ, պատկերներ, դրամատիկ պատկերներ)։

Հատորում տեղավորված են նաև հեղինակի մի քանի անտիպ պատմվածքները։

Գիրքն ունի ծանոթագրություններ, տեքստային տարբերություններ, բարբառով գրված ստեղծագործությունների տարեգրություն և բառարան։

Հ. Մ. ԵՂԱՆՅԱՆ — «Հասարակական-Քաղաքական հոսանքները Իրանում», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000. 234 էջ, գինը՝ 84 կ.։

Աշխատության մեջ ցույց է տրվում կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը Իրանի տնտեսության մեջ, դրա հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, այդ ամենի արտահայտությունը հանդիսացող հասարակական-քաղաքական սարքեր հոսանքները և նրանց գաղափարախոսությունը, նրա դրսևորման ձևերը և հետագա էվոլյուցիան։ Վերլուծվում են նաև առանձին բուրժուական գաղափարախոսների կյանքն ու գործունեությունը։